ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«25» 01 2022թ.
№ ԿԱՌՊ/2-111

«Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ (ՀՎՀՀ 76865063)
Դ. Թումանյանին
հասցե՝ ՀՀ ք. Եղեգնաձոր, Մոմիկի փ 30/2
էլ. հասցե՝ Liongroup-lion@yandex.ru
հեռ. 094-64-20-33

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ի միջև 13.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/12-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. պետք է մատակարարեր թվով տասներկու անվանատողով նախատեսված ապրանքներ, որոնցից մեկ անվանատողով նախատեսված ապրանքները՝ 20հատ ավտոմեքենաների պահեստամասեր (Կոմպրեսոր), չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Դավիթ Թումանյան Գագիկի» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը՝ ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 8 430 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 5 620 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 112 400 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 168 600 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am